Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

RESTORATION OF RIPARIAN ZONES IN ARMENIA

COVID-19 Response Project

«Գետերի ափամերձ տարածքների վերականգնում Հայաստանում»՝ ՔՈՎԻԴ-19-ի սոցիալ-տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված ծրագիր

FINAL REPORT/ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Yrevan 2021

Երևան 2021

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

վերջնական

Կազմակերպության անվանումը	**«ԲԼԵՋԱՆ»** բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության **հասարակական կազմակերպություն**
Հաշվետվության ժամանակահատված	**05.04-30.11.2021**
Պատասխանատու անձ	**Լիաննա Ասոյան** Նախագահ/Ծրագրի ղեկավար
Ներկայացման ամսաթիվ	**29.11.2021**

«ԲԼԵՋԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ «ԲԼԵՋԱՆ» ՀԿ) 2021թ. ապրիլի 5-ից նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում, որպես տեղական գործընկեր կազմակերպություն մասնակցել է «Գետերի ափամերձ տարածքների վերականգնում» ՔՈՎԻԴ-19-ի սոցիալ-տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված ծրագրին (այսուհետ՝ Ծրագիր), որն իրականացվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համատեղ: Ծրագրի տեղական աջակցող գործընկերներն են «ԲԼԵՋԱՆ» ՀԿ-ն, «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամը (այսուհետ՝ ATP) և «Այ Էս Էս Դի» Համայնքների կայուն զարգացման նորարարական լուծումներ (այսուհետ՝ ISSD) ՀԿ-ն:

Ծրագիրն իրականացվել է Գեղարքունիքի մարզի **18 համայնքներում՝ Վարդենիս, Ախպրաձոր, Մեծ Մասրիկ, Լուսակունք, Խաչաղբյուր, Կարճաղբյուր, Մարտունի, Արծվանիստ, Վարդենիկ, Գեղհովիտ, Մադինա, Լիճք, Ծակքար, Վ. Գետաշեն, Ն. Գետաշեն, Գեղարքունիք, Սարուխան, Ծովագյուղ** (այսուհետ՝ թիրախային համայնքներ), նպատակ ունենալով աջակցել ՀՀ Կառավարության 15-րդ միջոցառմանն ուղղված ՔՈՎԻԴ-19-ի սոցիալական հետևանքների չեզոքացմանը, միաժամանակ լուծելով բնապահպանական խնդիրներ: Թիրախային համայնքների տարածքներով հոսող **10 գետերի՝ Մասրիկ, Վարդենիս, Արծվանիստ, Կարճաղբյուր, Մարտունի, Արգիճի, Ծակքար, Լիճք, Գավառագետ, Զկնագետ** ափամերձ տարածքներում իրականացվել են ուռենու կտրոնների տունկ , գետերի հուների և ափամերձ տարածքների մաքրման աշխատանքներ:

Ծրագիրն իրականացվել է 2 փուլով.

<u>1-ին փուլի (ապրիլի 15-ից մինչև օգոստոսի 31-ը) ընթացքում</u>.

- **ATP-ի կողմից** Կարճաղբյուր, Արգիճի, Մասրիկ, Գավառագետ գետերի ափամերձ հատվածների հարակից համայնքներում (Մաքենիս-Ախպրաձոր, Վարդենիս, Մեծ Մասրիկ, Գեղհովիտ, Մադինա, Գեղարքունիք, Սարուխան) **տնկվել է 520000 ուռենու կտրոն:** Տնկիների կտրման և տնկման աշխատանքներին մասնակցել են վերը նշված, և Մարտունի և Ծովագյուղ համայնքների **<u>272 բնակիչ</u>** (259 բնակիչների հայտերը փոխանցվել էր ATP),
- **ISSD-ի կողմից** մաքրվել են Մասրիկ, Կարճաղբյուր, Արծվանիստ, Վարդենիս, Լիճք, Ծակքար, Մարտունի, Արգիճի գետերի ափամերձ տարածքները՝ թիրախային համայնքների **<u>253 բնակիչների</u>** մասնակցությամբ (252 բնակիչների հայտերը փոխանցվել էր ISSD): Մաքրման աշխատանքներն այս փուլով ավարտվել են:

<u>2-րդ փուլի (սեպտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 30-ը) ընթացքում.</u>

- **ATP-ի կողմից** Վերին Գետաշեն համայնքի վարչական տարածքում՝ Արգիճի գետի ափամերձ հատվածներում տնկվել է **80000 ուռենու կտրոն**՝ նույն համայնքի **<u>33 բնակչի</u>** մասնակցությամբ,

— իրականացվել են ծառատնկված և մաքրված տարածքների մշտադիտարկման և այդ տարածքների պահպանության նպատակով բնակչության իրազեկման աշխատանքներ։

Ծրագրում «ԲԼԵՋԱՆ» ՀԿ աջակցել է հետևյալ նպատակների իրականացմանը՝

- հավաքագրել Թիրախային համայնքների ՔՈՎԻԴ-19-ից տուժած մարդկանց (նախատեսված էր շուրջ **800 մարդ**, հավաքագրվել է **558 մարդ**)՝ նրանց առաջարկելով ծառատունկի և գետերի ափամերձ տարածքների մաքրման ժամանակավոր աշխատանք, գրանցել վերջիններիս տվյալները նախապես մշակված օնլայն հարցաշարի միջոցով,
- կազմակերպել բնապահպանական ուղղվածության իրազեկման դասընթացներ թիրախային համայնքների բնակիչների համար (նախատեսված էր **100 հոգու** մասնակցություն, մասնակցել է **175 մարդ**),
- պայմանավորվածություններ ձեռք բերել Ծրագրի թիրախային համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ) հետ կտրոնների տունկ իրականացված և մաքրված տարածքների հետագա պահպանության համար, իրականացնել մշտադիտարկում և իրազեկում։

Ընդհանուր առմամբ, Ծրագրի շրջանակներում գործընկեր կազմակերպությունների կողմից տնկման և գետերի ափամերձ հատվածների մաքրման նպատակով ժամանակավոր աշխատանքով ապահովվել է **558 մարդ** (ATP-ով-305 և ISSD-ով 253, փոխանցվել է տվյալներ 544 մարդու), տնկվել է **600000 ուռենու կտրոն** և հավաքվել է **234609 կգ աղբ**, որից **279 կգ՝ վերամշակելի**:


Աշխատանքի ընդունման հիմնական և կարևոր պայման է հանդիսացել Գեղարքունիքի մարզի մշտական բնակիչ և ՔՈՎԻԴ-19-ից տուժած լինելը։

«ԲԼԵՋԱՆ» ՀԿ-ի առաքելություններից է Ծրագրում թիրախային համայնքների ՏԻՄ-երի և հանրային սեկտորի հետ կապի ապահովումը, որն ուղեկցվել է բնակիչների իրազեկմամբ, մշտապես կարևորելով հանրության դերը շրջակա միջավայրի պահպանության և նրանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին՝ շեշտադրելով առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքը, ինչպես նաև որպես քաղաքացի նրանց պարտականությունները։


Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Համայնքային հանդիպումներ

Գործընկեր՝ ATP և ISSD կազմակերպությունների հետ համատեղ կատարվել են նախնական այցելություններ Թիրախային համայնքներ, աշխատանքային հանդիպումներ են իրականացվել ՏԻՄ-երի հետ՝ ծառատնկման ենթակա տարածքների բացահայտման և ճշտման, համավարակի ազդեցությանը ենթարկված բնակիչների բացահայտման, ինչպես նաև Ծրագրով նախատեսված նախնական իրազեկման միջոցառումներին հանրության մասնակցության ապահովման նպատակով:



Գավառի տարածաշրջան, հանդիպում ՏԻՄ-երի հետ



Վարդենիսի տարածաշրջան, Հանդիպում ՏԻՄ-երի հետ



Մարտունու տարածաշրջան, Հանդիպում ՏԻՄ-երի հետ

Հայտարարությունների մշակում և տարածում

2 փուլերի ընթացքում էլ Թիրախային համայնքներում բնակիչների մոբիլիզացման և ներգրավման նպատակով «ԲԼԵՋԱՆ» ՀԿ-ի ջանքերով տարածվել են ժամանակավոր աշխատանքի ընդունման հայտարարություններ:

Բնակիչների մոբիլիզացում, տվյալների հավաքագրում և վերլուծություն

Առցանց հարցաթերթերի միջոցով գրանցվել են և իրենց սոցիալական իրավիճակի վերաբերյալ տեղեկություն են տրամադրել թիրախային համայնքների համավարակից տուժած, ժամանակավոր աշխատել ցանկացող բնակիչները:

Մաքրման տարածքների նախնական գնահատում

Ծրագրի թիմի և ISSD կազմակերպության և ՏԻՄ-երի ներկայացուցիչների կողմից կատարվել է **Մասրիկ, Վարդենիս, Արծվանիստ, Կարճաղբյուր, Մարտունի, Արգիճի, Ծակքար, Լիճք, Գավառագետ, Ձկնագետ** գետերի ափամերձ տարածքների նախնական գնահատում





Մաքրման տարածքների նախնական գնահատում

Բնապահպանական կրթություն և իրազեկվածության բարձրացում

Բնության պահպանման, գետերի ափամերձ տարածքների վերականգնման աշխատանքների շարունակականության ապահովման և «կանաչ» ձեռներեցության տարածման նպատակով ծրագրի շրջանակներում իրականացվել է «կանաչ» դասընթացների շարք:

Դասընթացներն իրականացվել են Գավառի, Սևանի, Մարտունու և Վարդենիսի տարածաշրջանների համար, որոնց մասնակցել է **175** բնակիչ (Գավառ՝ **59**, որից 75%-ը կին, 25%-ը տղամարդ, Սևան՝ **26**՝ 77%-ը կին, 13%-ը տղամարդ, Մարտունի՝ **46**, որից 83%-ը կին, 17%-ը տղամարդ, Վարդենիս՝ **44**, որից 43%-ը կին, 47%-ը տղամարդ:

Այն մասնակիցները, ովքեր մասնակցել են բոլոր 3 դասընթացներին, ստացել են մասնակցության հավաստագիր, որը նույնպես պատրաստվել է «ԲԼԵՋԱՆ» ՀԿ-ի կողմից, համաձայնեցվել տեղական գործընկերների հետ և հաստատվել ԳՄՀԸ-ի կողմից:





Դասընթացներ, հավաստագրերի հանձնում

Դիտորդական առաքելություն

Ծրագրի իրականացման 2-րդ փուլում՝ հուլիս-հոկտեմբեր ամիսների ընթացքում, սկսվել է դիտորդական առաքելությունը. նախապես ընտրված էկոպարեկների և տարածքային պատասխանատուների կողմից կազմելով մշտադիտարկման թիմեր, իրականացվել են տնկված ու մաքրված տարածքների մոնիտորինգ և իրազեկման միջոցառումներ:

Մշտադիտարկում իրականացնելու նպատակով ընդհանուր առմամբ կատարվել է **84** այցելություն, որոնցից **35-ը**՝ ՏԻՄ ներկայացուցիչների մասնակցությամբ: Այցելություններից 37-ը եղել է տնկված տարածքների, իսկ **47-ը**՝ գետերի մաքրված ափամերձ տարածքների դիտարկումներ:

Գետերի ափամերձ տարածքների մշտադիտարկումների ժամանակ թիմի անդամները **42** հանդիպումներ են ունեցել բնակիչների հետ՝ նպատակ ունենալով բարձրացնել գետերի և ափամերձ տարածքների մաքուր պահպանելու կարևորությունը, մաքուր պահել գետերը և շրջակա միջավայրը, հորդորել բնակիչներին հետևողական լինել և չթողնել ուրիշներին:






Իրազեկում՝ Գավառագետ, Արգիճի և Մասրիկ գետերին կից համայնքներում

Լուսանկարները կատարված են ԲԼԵՋԱՆ ՀԿ-ի կողմից

Ծրագրի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ԲԼԵՋԱՆ ՀԿ-ին
www.blejanngo.org

ENVIRONMENT, CLIMATE, OPPORTUNITIES

for people and nature



Management of natural resources and safeguarding of ecosystem services for sustainable rural development in the South Caucasus(ECOserve)

Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH 59 Hanrapetutyan st., 9th floor
0010 Yerevan, Republic of Armenia
Tel. +374 10510065
www.giz.de
http://biodivers-southcaucasus.org/